10359

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«13» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0092-22

Ձեռնարկողը՝ *«Գոլդեն Սթրոնգ» ՍՊԸ*
Արարատի մարզ, գ. Սուրենավան, Երևանյան խճուղի 6/1

Գործունեությունը՝ ***Արարատի փրավերփինների և կավերի հանքավայրի փրավերփինների «Գոլդեն Սթրոնգ» փեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ, Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0092-22

<13> 07 2022թ.

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Գոլդեն Սթրոնգ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Գոլդեն Սթրոնգ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Ավշար բնակավայր

Ներածական մաս. Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Գոլդեն Սթրոնգ» տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Հանքավայրը վարչական առումով գտնվում է Արարատի մարզի, Արարատ խոշորացված համայնքի Ավշար գյուղի վարչական սահմանում: Հանքավայրին մոտակա բնակավայրերն են՝ Ավշար, Գոռավան գյուղերը և Վեդի քաղաքը:

Ըստ հաշվետվության Տրավերտինների արդյունահանման նպատակով հայցվող տեղամասը հաշվառված է որպես 5-րդ կարգի արոտավայր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատներն են (ըստ Arm WGS-84 համակարգի).

1. 4415451.9923 8476833.1438
2. 4415600.4528 8476828.2098
3. 4415676.5710 8477192.1945
4. 4415641.5710 8477186.1945
5. 4415605.5710 8477167.1945
6. 4415559.5710 8477108.1945
7. 4415538.5710 8477067.1945
8. 4415483.5710 8476987.1945
9. 4415465.5710 8476928.1945

ՀՀ ԲՆՕՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԱՅՈՒՆԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ * РА ЕРЕВАН * ՀՈՍ * ՊՈՍԿՈ * ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER LLC * ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ * ЭКСПЕРТИЗЫ * ՀՀ ԲՆՕՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԱՅՈՒՆԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ

02543163

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ

COMMISSION OF EXPERTS

1. 4415451.9923 8476833.1438

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը - 380մ,
- առավելագույն լայնությունը - 145մ,
- մշակման խորությունը - 50մ,
- օտարման տարածքը – 4.4հա,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը -710000մ^3,
- թարմ տրավերտիններ – 644000մ^3,
- փուշտա – 44000մ^3,
- ոչ կոնդիցիոն ապարներ – 22000մ^3
- օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների քանակը -643150մ^3
- թարմ տրավերտիններ – 585200մ^3,
- փուշտա – 38490մ^3,
- ոչ կոնդիցիոն ապարներ – 19460մ^3,
- հանքաստիճանի բարձրությունը՝ 5մ:

Նախագծված բացահանքի ծառայման ժամկետն 20 տարի է: Բլոկների բարձումն իրականացվում է թրթուրային կռունկի միջոցով: Հողմահարված տրավերտինները և հանույթից առաջացած տրավերտինների ջարդոնները պիտանի են ցեմենտի արտադրության համար, ուստի բուլդոզերով հեռացվում են մշակվող հորիզոնում և կուտակվում, այնուհետև ավտոինքնաթափով տեղափոխվում են ջարդիչ կայանք: Բացահանքը նախագծված է երեսպատման իրերի բլոկների արդյունահանման համար: Տրավերտինների հանույթի հատումները հորիզոնական ուղղությամբ կատարվում են «Виктория» մակնիշի ներհատ /բարային/ կտրիչաշղթայավոր քարհատ մեքենայի միջոցով: Իսկ ուղղաձիգ հատումները կատարվում են «Надежда-2» մակնիշի ալմաստաճոպանային քարհատ մեքենայով: Տեղանքի ռելիեֆը և տեղամասի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները թույլ են տալիս հանքավայրի շահագործումն իրականացնել բաց եղանակով:

Բլոկների միջին ելքը կազմում է 53%: Մակաբացման փխուր բեկորային ապարները մինչև շահագործման 7.6 տարին ժամանակավորապես պահեստավորվում են արտաքին լցակույտում, որից հետո մշակված տարածությունում:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ օգտակար հաստաշերտի նախագծային կորուստները որոշված են ըստ հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանների (կախված օգտակար հաստաշերտի եզրագծի բարձրության աստիճանից և տեղադրման անկյան անկյունից): Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ ընդհանուր կորուստները կազմում են 66,850մ^3 կամ 9,4%: Այդ թվում թարմ տրավերտինների համար 58800մ^3 (9.1%), փուշտայի համար 5510մ^3 (12.5%), ոչ կոնդիցիոն ապարների համար 2600մ^3 (11.8%):

Տարվա մեջ աշխատանքային օրերի քանակը կազմում է 200 օր, մեկ հերթափոխ, հերթափոխի տևողությունը 8 ժամ: Տարեկան արտադրողականությունը ըստ արդյունահանման՝ կազմում է 30000մ^3 թարմ տրավերտիններ:

Տրավերտինների հաստաշերտի մշակման ժամանակ բլոկների արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել բարձրաստիճան միակողանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարները նախ արտաքին, ապա հետագայում ներքին լցակույտ տեղափոխելով: Ընդունված մշակման համակարգի տարրերը

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հաշվարկված են համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, որով նախատեսվում է միաքարի արդյունահանման աշխատանքները կատարել «Виктория» մակնիշի կտրիչաշղթայավոր քարհատ մեքենա և «Надежда-2» մակնիշի ալմաստաճոպանային քարհատ մեքենա համալիրով: Քարհատ մեքենայի ճոպանը թելելու համար անհրաժեշտ ուղղաձիգ հորատանցքերի հորատումը կատարվում է «Камея» մակնիշի հորատման հաստոցի միջոցով:

Բացահանքի լցակույտ առաջացնող մակաբացման ապարները 5750մ^3 ընդհանուր ծավալով ներկայացված են փուխր բեկորային ապարներով: Մակաբացման ապարները մինչև 1055մ նիշ ունեցող հանքաստիճանի շահագործման վերջը 2540մ^3 ծավալով (շահագործման 7,6 տարվա վերջը) նախատեսվում է ժամանակավոր պահեստավորել բացահանքի հյուսիս-արևմտյան մասում նրա եզրագծի հարևանությամբ: 1055մ հորիզոնը շահագործելուց հետո նախատեսվում է մակաբացման ապարները 320մ^3 ծավալով պահեստավորել մշակված տարածությունում, փռել և հարթեցնել: Այնուհետև բացահանքի շահագործման հետ զուգահեռ արտաքին լցակույտից ապարները ատիճանաբար տեղափոխվելու են մշակված տարածություն, փռվելու են ու հարթեցվելու լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով: Ժամանակավոր արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0.1հա: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով: Մշակված տարածության լեռնատեխնիկական ռեկուլտիվացված տարածքը կազմում է 3.73հա:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է կտրման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման (ճոպանային սղոցի և ճոպանը աշխատանքի ընթացքում սառեցնելու և առաջացած փոշին կլանելու ու տեղափոխելու համար), աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է КрАЗ 256Б ավտոմեքենայի վրա հարմարեցված ջրի ցիստեռնով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ջրի ցիստեռնով: Ջրերի մատակարարումը կատարված է պայմանագրային հիմունքներով: Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասը մեկ տարում կազմում է 4184.67հազ.դրամ

Բացահանքի մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կազմում է 3.73հա: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմ 1351.0 հազ. դրամ:

Հայցվող տարածքում ըստ ներկայացված հաշվետվության ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ ինչպես նաև դրանց աճելա և ապրելավայրեր չեն հայտնաբերվել:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Տեղամասի տարածքում նավթամթերքների, բանեցված յուղերի, քսայուղերի կուտակման/պահեստավորման բացառում:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով:
-Հանքի խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Լցակույտում պահպանվող հողի բերրի շերտի մոնիթորինգ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:
- Հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում:
- Աղմուկի մակարդակի վերահսկողություն:

Փորձաքննական հիմնավորումներ: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Գոլդեն Սթրոնգ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել: Կադաստրի կոմիտեի կողմից ստացված գրությունների և կադաստրային քարտեզի համաձայն, ընկերության կողմից հայցվող տարածքի 4.4513հա հողամասից 1.4513հա-ը հանդիսանում է հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական հողամաս, իսկ 3,01204հա-ը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամաս: Նշվածի վերաբերյալ Ընկերությանը գրավոր տեղեկացվել է ՇՄԱԳ-ում և Նախագծում համապատասխան փոփոխություններ անելու վերաբերյալ՝ ընդհանուր հողամասից հանել 1.4513հա բնապահպանական հողամասը: Սակայն մինչև փորձաքննական գործընթացի ավարտը համապատասխան փոփոխություններով նախագիծը և ՇՄԱԳ-ը չի ներկայացվել փորձաքննության: Ելնելով վերոգրյալից, «Գոլդեն Սթրոնգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Գոլդեն Սթրոնգ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումը «Գոլդեն Սթրոնգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների

«Գոլդեն Սթրոնգ» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Մեսրոպյան